ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1067 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն և վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշումները՝

1. Հայկական համայնքային կառույցների, կրթամշակութային և երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև գործարար ոլորտի հայազգի գործիչների և պաշտոնատար անձանց հետ համագործակցության հետագա ուղիները քննարկելու նպատակով՝

1) Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Ջոն Սինանյանին 2025 թվականի նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 12-ը ներառյալ գործուղել Մոլդովայի Հանրապետություն (Քիշնև՝ նոյեմբերի 24-27-ը) և Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Լոս Անջելես՝ նոյեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 3-ը, Դենվեր՝ դեկտեմբերի 3-5-ը, Նյու Յորք՝ դեկտեմբերի 5-9-ը, Վաշինգտոն՝ դեկտեմբերի 9-11-ը).

2) Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի (այսուհետ՝ գրասենյակ) հայրենադարձների ինտեգրման վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Լուսինե Ուստյանին 2025 թվականի նոյեմբերի 24-26-ը ներառյալ գործուղել Մոլդովայի Հանրապետություն (Քիշնև).

3) Գրասենյակի հայրենադարձների ինտեգրման վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգողներ Նելլի Ղուլյանին և Անժելա Ղուկասյանին 2025 թվականի նոյեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 12-ը ներառյալ գործուղել Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Լոս Անջելես՝ նոյեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 3-ը, Դենվեր՝ դեկտեմբերի 3-5-ը, Նյու Յորք՝ դեկտեմբերի 5-9-ը, Վաշինգտոն՝ դեկտեմբերի 9-11-ը):

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ գործուղման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի «Հայաստան-Սփյուռք գործակցության» ծրագրի «Աշխատանք սփյուռքի համայնքներում» միջոցառման արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարին՝ ապահովել գործուղումից վերադառնալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

21.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ